



“ԹՈՂ ՏՈՒՒՔ ՄԱՆԻ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՄԻ ԳՍԷ” ԴՈՒԿ • ԺԸ • 16 :

ՀԱՏՈՐ ԺԶ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՅՈՒԼԻՍ 1, 1887

ԹԻԻ 7

ԲԱԶԷ

Տեսակ մը բազէ կայ որ համբաւաւոր է իւր քայութեան կողմանէ եւ շատ կը գտնուի Եւրոպայի քանի մը կողմերը: Անոր թեւերն են շատ մեծ բարդատեղով մարմնոյն հետ, եւ անոնցմով կրնայ քիչ մը ատեն երթալ ժամը 100 մղոն: Կրնայ թռչել մը որ թռած է մէկ աւուր մէջ փարիզու մերձակայ: Ֆոնթէնէպոյ քաղաքէն Մարթա կղզին, որոց իրարմէ հեռաւորութիւնն է աւելի քան 900 մղոն: Այս թռչունն այնչափ ուժեղ է որ կրնայ իւր ծանրութիւնն ունեցող կենդանիներ վերցունել տանիլ: Անոր սովորական որսն են փոքր թռչուններ եւ նապաստակներ, եւ է վտանգաւոր դրացի հաւնոցներու: Ազուան է անոր անհաշտ թշնամին, եւ երբ կը կռուին երկուքն իրարու հետ, սովորաբար ազուան կը տանի յաղթանակը:

Քանի մը տարի առաջ բազէ մը հաստատեց իւր բոյնը փարիզու Նոթր Ծամ եկեղեցոյ աշտարակին վրայ, եւ ամէն օր կը բռնէր քաղաքին ընտանի աղանդներէն քանի մը հատ, մինչեւ որ տէրերը փակեցին անոնց բոյնն աղանդներուն մէջ ի պաշտպանութիւն նոցա: Երբեմն պատահած է որ երբ որսորդը կը զարնէ թռչուն մը եւ մինչ գետին կ'իջնայ սա, բազէն կը յափշտակէ զայն. նաեւ երբեմն պատահանաց ապակիները կը կտորէ բռնելու համար իւր որսը:

Հին ատենները բազէներու միջոցաւ որսորդութիւն ընել սիրելի զուարճութիւնն էր Եւրոպայի թագաւորաց եւ ազնուականաց: Թռչունները կը վարձուէին նստել իրենց սիրով գաստակին վրայ, եւ յետոյ երբ նշան տրուէր, ցատկել իրենց որսին վրայ եւ բերել զայն իրենց սիրով: Վարձուած բազէն միշտ ընտիր նուէր կը համարուէր թա-



ԲԱԶԷ

գաւորի մը, եւ բազէպանաց գլխաւոր տէրութեան մէջ բարձրագոյն պաշտօնէից մին էր: Գաղիացի մատենագիր մը կ'ըսէ թէ միջին դարուց մէջ ազնուական մը դուն ուրեք կ'երեւէր հրապարակին մէջ առանց բազէ մը ունենալու իւր դաստակին վրայ, եւ թէ մինչեւ անգամ իրեն հետ եկե-

ղեցի կը տանէր բազէն, դնելով զայն սեղանին աստիճաններուն վրայ պատարագին ժամանակը: Հրապարակական հանդէսներու մէջ ազնուականք իրենց մէկ ձեռքով կը բռնէին իրենց բազէները, եւ միւս ձեռքով՝ սուրերուն երախակալները:

“ԴՈՒՆ ԳԻՏԵՍ”

“ՈՎ ՏԵՐ, ԴՈՒՆ ԻՄ ՎԻՃԱԿԱ ՂԻՒՄՆԱ” ԵՐ. ԺԵ. 15:

Այս փոքրիկ բնաբանը մտիթաւրութիւն եղած է ինչպէս բազում տարօք անձանց նոյնպէս և շատ մը վշտացեալ տղայոց: Իրերը միշտ փայլուն չեն փոքրիկներուն, և անոնք միշտ չեն կրնար վայելել այնչափ համակրութիւն ուրիշներէ որչափ ունին պէտք, վասն զի անոնց նեղութիւնները չեն ճիշդ նոյն տեսակէն ինչպէս են չափահաս անձանցը: Սիրելի փոքրիկ տղայք, կայ այսօր այդպիսի բան մը: Ունիք նեղութիւն և տրտութիւն զոր չկրցաք յայտնել կամ բացատրել ուրիշի, և ո՞չ ոք կարող եղաւ մտիթարել ձեզ վասն զի ոչ ոք հասկցած էր ձեր վիճակը: Առէ՛ք սա փոքրիկ բարձր և հանգչեցուցէ՛ք անոր վրայ ձեր յոգնած և նեղեալ փոքրիկ սիրտը այս գիշեր, “ԴՈՒՆ ԳԻՒՄՆԱ” ՈՎ ԴՈՒ, ՏԵՐ ՅԻՄՈՒՍ, քաղցրը Հովիւ յոգնած և թափառող փոքրիկ դառանց, ԴՈՒՆ ԳԻՒՄՆԱ ամէն բան որ ինձի պատահած է: ԴՈՒՆ լաւ ես այն խօսքերը որ զիս յոյժ վշտացուցին: ԴՈՒՆ տեսած ես ճիշդ ինչ որ պատահեցաւ և վշտացուց զիս: ԴՈՒՆ գիտես ինչ որ կարող չեղայ բացատրել ուրիշներու: ԴՈՒՆ կը հասկընաս իմ խորհուրդս: ԴՈՒՆ վար նա-

յած ես իմ սրտիս մէջ և բան մը չկայ հոն քննէ ծածուկ: Դուն գիտես քու ճշմարտութիւնն անոր վրայ, և գիտես բոլոր այն բաները զորս բնաւ կարող չեմ խօսքով զրուցել:


Եւ Տէր Յիսուս ոչ միայն գիտէ՝ այլ նաև կը հոգայ և կը սիրէ զձեզ, այնպէս որ չուզեր որ այս նեղութիւնը վնաս մը գործէ իւր սիրելի զաւակին, — երբ գիտէ անոր վիճակը միշտ և հանապաղ, — բայց կ'ուզէ որ այն նեղութիւնն ըլլայ փոքրիկ պատգամաւոր կոչելու զձեզ իրեն որպէս զի միտքաբար է, և ցուցնէ ձեզ թէ ինքն է ձեր լաւագոյն Բարեկամը, և սորվեցունէ ձեզ «Դուն գիտես» խօսքին քաղցրութիւնը:



ԵԳԻՊՏՈՍԻ ԲՈՒՐԳԵՐԸ

Օր մը Աղէքսանդրիայէ շուգեկառք նստելով երթալ Գահիրէ և հետևեալ օրը իշու վրայ նստելով ահագին բուրգերը՝ որք շինուեցան իբրև գերեզմաններ ֆէոպսի և ուրիշ եգիպտական թագաւորաց համար, ասկէ՝ առաւել քան 3,000 տարի առաջ, կը թուի օտարոտի խառնուրդ մը ընել ներկայիս և անցելոյն: Եգիպտոս ուրիշ բուրգեր ևս կան բայց անոնք որ քան զամենայն մօտ են և վասն որոյ աւելի այցելուներ կ'ընդունին, երեք հատ են և իբր 2 ժամ հեռի Գահիրէէ, որոց մեծագոյնը կը կրէ ֆէոպսի անունը: Շինուած է սպիտակ կրօքարէ, եւ անոր քովերը այժմ կը ներկայացունեն անկանոն սանդուղ ինչպէս կ'երեւի պատկերին մէջ: Առաջ անոր աստիճանաց անկիւնները լցուած էին աւելի մանր քարերով եւ այսպէս հարթուած, բայց այս քարերը վերցուեցան անկէ. նաև կտրուած է բուրգին գագաթը, այնպէս որ 479 ոտք նախկին բարձրութիւնը իջած է 450 ի: Բայց կը մնայ տակաին 82,111,000 խորանարդ ոտնաչափ շագախ և քար, և հաշիւ եղած է թէ անոր քարը կը կշռէ աւելի քան 4½ երկիւղիոն քաշ:

Բուրգին գագաթնէն ելլել դժուարին է, եւ սովորաբար ճանապարհորդք կ'ելլեն Արաբներուն օգնութեամբ ինչպէս կը տեսնուին պատկերին մէջ: Շատ չընէր, Անգղիացի մը որ կարծեց թէ կրնար բուրգին գագաթնէն ելլել առանց ուստեք օգնութեան, կորսնցուց իւր հաւասարակշիւութիւնը և վար գլորելով մեռաւ: Գագաթնէն երբ կրնայի մարդ, վե՛մ տեսարան մը կը ներկայանայ իւր շուրջը: Մէկ կողմը անապատը կը ծաւալի աչքին տեսութեան սահմանէն անդին, մինչ միւս կողմը կ'երեւի Գահիրէ իւր շրջակայ գիւղերով, եւ Նեղոս գետը որ կը դառնայ անոնց մէջ ոլորտապտոյտ նման



ԵԳԻՊՏԻ ԲՈՒՐԳԸ

երկու կողմը կանաչ եզերքով արծաթ երիզի:

Բուրգին մէջ կայ երկայն ոլորուն ճամբայ մը որ կը տանի իբր 20 ոտք երկայն եւ նոյնչափ լայն սենեակ մը ուր դրուած էին թագաւորին եւ անոր ընտանեաց զմուսեալ մարմինները: Բուրգին շինողին նպատակն էր ունենալ հանգստեան տեղի մը ուր դրուի իւր մարմինը անվրդով, բայց ասկէ շատ ժամանակ առաջ հանուեցաւ անկէ, ինչպէս ոմանք կ'ըսեն, Պարօիկ յաղթական Կամբիւսի ձեռամբ. բայց վերջերս բացուեցան ուրիշ բուրգեր

Երկու կողմը կանաչ եզերքով արծաթ երիզի:

Բուրգին մէջ կայ երկայն ոլորուն ճամբայ մը որ կը տանի իբր 20 ոտք երկայն եւ նոյնչափ լայն սենեակ մը ուր դրուած էին թագաւորին եւ անոր ընտանեաց զմուսեալ մարմինները: Բուրգին շինողին նպատակն էր ունենալ հանգստեան տեղի մը ուր դրուի իւր մարմինը անվրդով, բայց ասկէ շատ ժամանակ առաջ հանուեցաւ անկէ, ինչպէս ոմանք կ'ըսեն, Պարօիկ յաղթական Կամբիւսի ձեռամբ. բայց վերջերս բացուեցան ուրիշ բուրգեր

եւս, եւ ի մէջ այլոց գտնուեցաւ հաւականապէս նաեւ մարմինն այն փաւառնին որ Յովսէփը չէր ճանչնար, եւ չարաչար վարուեցաւ խորայեղացւոց հետ:

Որչափ ժամանակէ հետէ մնացած են այն բուրգերը, եւ քանի՞ դարեր դեռ պիտի մնան, բայց երբ անոնք փշուրին եւ ըլլան փոշի, զայնս շինող մարդոց հոգիները պիտի ապրին տակաւին, և պիտի ապրին յաւիտեան:

ԱՅՈՒՆԱ ԿՂԶԻՆ

Սկովտիոյ արևմտեան ծովեզերաց մաս կը գտնուի փոքրիկ կղզին Այոնա որ հիմա կը վերաբերի Արկայի դուքսին որոյ որդին, Լորնի մարքիզը, ամուսնացած է Վիքթորիա Թագուհւոյն դուստրերէն միոյն հետ: Այս կղզին երկար ժամանակ եղաւ կրօնական շատ կարևոր կեդրոն: Սկովտիոյ քրիստոնեայ ըլլալէն առաջ այն կը վերաբերէր Տրուիտ կոչուած քուրմերուն, և էր գլխաւոր տեղի անոնց արարողութեանց որոց մին էր մարդագոհը:


Թամին 563 Գրոյմպա, իրլանտացի ճգնաւոր մը, որ արդէն հաստատած էր յիրլանտա քանի մը մենաստաններ, եկաւ Այոնա, և գտնելով զայն յարմար իւր նպատակաց՝ պարզեւ առաջայն Հարաւային Սկովտիոյ քրիստոնեայ թագաւորէն: Հոն կառոյց եկեղեցի մը և մենաստան, և այնուհետեւ սկսաւ իւր կենաց մեծ գործին որ էր քրիստոնէութեան դարձունել հեթանոս Բիքթերը որք կը բնակէին Սկովտիոյ հիւսիսային մասին մէջ: Իւր քարոզութեամբք և սուրբ վարուք յաջողեցաւ, և Բիքթեաց ամբողջ ցեղը եղաւ քրիստոնեայ անոր և իւր աշակերտաց աշխատութիւններով: Շատ մեծ նաստաններ հիմնուեցան, բայց Այոնայինը կը նկատուէր անոնց մայրը, և երկար ժամանակ եղաւ եպիսկոպոսական աթոռ:

Սրբոյն Մարիամու եպիսկոպոսանիստ եկեղեցին, որոյ աւերակները կը տեսնուին պատկերին մէջ, շինուեցաւ ապէ՛հ առաւել քան 600 տարի առաջ: Կ'ըսուի թէ կղզին ժամանակաւ ունէր 360 քարէ խաչեր, բայց անոնց մեծ մասը կորսուեցան Սկովտիոյ Բողոքականութեան դառնալէն ետքը: Սակայն անոնցմէ չորս հատ կը մնան դեռ, որոց մին, Սբ. Մարտինոսի խաչը, կը


ցուցուի հոս: Կղզին այժմ ունի իւր 250 բնակիչ:

ՃՇՄԱՐԻՏ ԳԻՒՑԱԶՆՈՒԹԻՒՆ

Մարդ երբ անձնուրացութեամբ իւր կեանքը վտանգի կ'ենթարկէ՝ քաջութիւն և ճշմարիտ մեծութիւն միշտ կը միանան: Այս կ'երեւի հանդարտ զուարս անոր, «փոյթ չէ ինձ համար, օգնէ ճոնիին, նա հինգ տարեկան միայն է:»



ՍԲ. ՄԱՐԻԱՄՈՒ ԵՅԵԼՆՅԻՆ



ՍԲ. ՄԱՐԻՆՈՍԻ ԽԱՉԸ

հողութեանց մէջ որ կ'ըլլան բարեկամաց համար և աւելի սոսկալի և խիզախ քաջագործութեանց մէջ հայրենեաց օրէնքին և անոր բնակչաց բարութեանն համար:

Մտերս տեսնուած են երկու դիւցազնական գործեր՝ մին փոքրիկ աղջրկան մը և միւրը՝ զօրաւոր մարդու մը վրայ: Փոքրիկ աղջկան վրայ ինկած էին ծանր գերաններ Բանասաքաղաքին դպրոցներէն միոյն մէջ որ վրաւ փոթորկի ժամանակ, և մինչ մարդ մը եկաւ ազատել զնա, աղջիկն

ըսաւ անոր, «փոյթ չէ ինձ համար, օգնէ ճոնիին, նա հինգ տարեկան միայն է:»

Դիւցազն մարդն էր Լավոյաթէթ, Մոնթրէալի բանտին պահապան ղինուարաց տեսուչը զոր ապստամբ ոճրագործք բռնեցին և իբրեւ վահան իրենց առջեւ առին մինչ կը յարձակէին պահապան ղինուարաց վրայ:

«Փոյթ մի ընէք զիս, մարգիկ», աղաղակեց նա, «կրակ ըրէք: Կատարեցէք ձեր պարտականութիւնը:»

Պահապանք վարանեցան: Դարձեալ աղաղակեց Լավոյաթէթ «Կատարեցէք ձեր պարտականութիւնը, մարդիկ: Կրակ ըրէք:»

ԵՐԿԱԹԵԱՑ ՆԱԻՆԻ

Ներկայ դարը կը կոչուի երկաթի դար, վասն զի երկաթը կը բռնէ հետզհետէ այլ և այլ նիւթոց տեղը վաճառականութեան և արուեստից մէջ: Ի վեր քան զամենայն երկաթէ նաւերը կը բռնեն ծովուն փայտեայ նաւերուն տեղը:

Չարմանալի տեսարան է զոր կը տեսնէ մարդ մեծ նաւարանները ուր պողպատ ատաղձներ շարունակ կը հանուին կաղապարներէն, մինչ սցս ատաղձներուն վրայ երկաթ տախտակներ շերտ շերտ նման հին տախտակաց՝ ամուր կը հաստատուին ապշեցուցիչ արագութեամբ:

«Կէս դար առաջ», կ'ըսէ ժամանակակից հեղինակ մը, «նաւավարը կը քնանար չունենալով բան մը իւր և անյատակ անդունդին մէջտեղ բայց եթէ տախտակ մը: Հիմա ունի փոխանակ անոր՝ մետաղեայ բարակ թերթ մը, բայց ի՞նչպէս հաստատուն և ապահով անջատում:»

Ճոն Ուիլքինսըն անուն Անգղիացի մըն էր որ անցեալ դարուն մէջ խորհեցաւ երկաթէ նաւեր շինել: Փոքրիկ հարստութիւն մը դիզած էր իւր մէկ գիւտին շնորհիւ: Օր մը միտքը ինկաւ սա խորհուրդը թէ երկաթը կըրնար գործածուիլ շինելու համար նաւեր լոյս չընել վրայ:

Անոր բարեկամները և ընկերները և մեծաւանդ այնպիսիք որ էին նաւաչէն, ծաղրեցին այդ գաղափարը: Երկաթէ նաւ մը լողայ, ըսին: Դարը նոցապետ մը որոյ առջև Ուիլքինսըն

կը բացատրէր իւր սկզբունքը, առաւ ձիւ պայտ մը, և նետեղով զայն դոյլ մը ջրոյ մէջ, գոնեց, «Այո՛, քու երկաթ նաւը կը լողայ ճիշդ ասոր նման»:

Բայց Ռեիլքինսըն գիտէր թէ ինչպէս պիտի շինէր իւր երկաթէ նաւը, և շինեց զայն: Եւ կը լողար գեղեցիկ կերպով. և ահա այս էր սկիզբն ահա գին նաւատորմին երկաթէ նաւուց որ հիմա կը ծածկեն ովկիանոսը:

Ճոն Ռեիլքինսըն մեռաւ յամին 1808 հարուստ եւ պատուաւոր: Ընծայելու համար պատիւ մետաղին որ բրած էր զնա համբաւաւոր, կտակեց թաղել զինք երկաթ տախտակներէ շինուած անտուկի մէջ:

ԲԱՆՔ ՄԱՆԿԱՆ

(Իւր դասագիրքը, կարճակող «Գեթ ճշմարտութիւն» մը, է ձեռին):

Մանկիկ մ'եմ ես տաս տարեկան Որ եղած եմ պարոզական. Հայր չունիմ ես, բայց ունիմ մայր Որ ինձ համար է նաեւ հայր:

Սիրուն մայրիկա է իմ արեւ, Ես դառնայի չորքած տերեւ, Եւ լինէի, անտուն, անտէր Եթէ նա զիս չը խնամէր:

Գիշեր ցորեկ նա կը կարէ Որպէս զի մեզ ապրուստ ձարէ, Ու զիս զրկէ ի վարժարան, Որ վերջ լինիմ մարդ պատուարժան:

Այս իմ գնած նոր դասագիրք Տեսէք, տեսէք, ի՛նչ գեղեցիկ. Անոր կողեր ս'ըջափ աղուոր, Ինձ համար են կարմիր խնձոր:

Դուք տեսն'ր էք այն պատկերներ Որ այս գրքի մէջ են տպեր. Շատ գեղեցիկ պատկերներ կան, Տեսէք պատկերն այս պատուական:

Մեր Տէր Յիսուան է ասիկա, Իր գրկաց մէջ տեսէք ո՛վ կայ— Փոքր տղայք, զորս ինք կ'օրհնէ, Իւր օրհնեալ ձեռք անոնց վրան է:

Ա՛խ, երանի՛ այս տղայոց, Եթէ ես ալ Յիսուսի ծոց Գանուէի այն նոյն ատեն, Բիւր երանի՛ ինձ անատեն:

Տեսէք, խնդրեմ, եւ այս պատկեր, Երկու բարի փոքր եղբայրներ, Իրենց դասեր ի՛նչպէս սիրով Սորվին նստած իրարու քով:

Ես ալ պիտի ասոնց նման Ըլլամ բարի, տամ զիս ուսման, Նոր դասագիրքս այս պատուական Պիտի սորվիմ ինչպէս արժան:

Իմ վարժապետ երբ անցած օր Ըսաւ, «Տղայք, դասագիրք նոր Պիտ' սկսիք դուք կարգալ վաղ», Շատ եղաւ իմ խնդուն եւ խաղ:

Դպրոցէն վերջ վագեցի տուն, Որ պատմէի զայս մօրս սիրուն, Որ նա ինձ հետ ուրախանար, Գիրք գնելու գտնէր հնար:

Մայրս երբ լսեց չուրախացաւ, Չեմ գիտեր թէ ինչ պատճառաւ, Եւ խրատեց որ համբերեմ, «Բեղ դասագիրք, ըսաւ, կը ձարեմ»:

Բայց այս խօսքով չեղայ ես գո՛հ, Այն իրիկուն շատ լացի, ո՛հ, Որպէս զի մայրս ինձ յաջորդ օր Շուտով գնէր դասագիրք նոր:

Մայրս սրբելով աչացս արցունք Տաք երեսիս դամեց շրթունք, Եւ պագնելով ու շոյելով «Մի՛ լար, մի՛ լար, կ'ըսէր սիրով:

Մի՛ լար, որդեակ, քեզի համար, Քանի որ դու զեռ չես անմայր, Մի՛ գիրք մայրիկդ պիտի գնէ Զրկելով զինքն հանգիստ քունէ:

Եկուր գիտնէք առ մեր Աստուած Աղօթենք որ տայ մեր խնդրած.՝ Ձեռներս բռնած նա լալազին Ըրաւ աղօթք մի սրտագին:

Գրքի մասին մայրս յատկապէս Աղօթելով ըսաւ այսպէս, «Ո՛վ Աստուած իմ, տուր որք որդւոյս Գիրք որ չմնայ նա, ո՛հ, անուս»:

Աղօթքէն վերջ ես անհամբեր Ըսի «Աստուած սիրէ որբեր, Աղօթքի մէջ ինչո՛ւ համար Զըսիր որ գիրք վաղ շուտով տար»:

Պատասխանեց մայրս թէ «Աստուած Իւր բարիքներ միշտ է տուած ձիշդ այն ատեն երբ է յարմար, Այս նկատմամբ դու մի հոգար»:

Քնանալու է ժամանակ Արդ քնացիր, սիրուն որդեակ, Դու անուշ քուն քաշէ ձագիկ Ես ալ կարեմ այս նոր շապիկ:

Կարեմ հիւսեմ մինչեւ ձարեմ Գին մի գրքի զի անձար եմ. Քնանալու է ժամանակ, Արդ քնացիր, ով իմ որդեակ»:

Ուրախացած եւ լիայոյս Թէ քիչ օրէն անտարակոյս Պիտ' ունենամ նոր դասագիրք, Գո՛հ պատկեցայ ես իսկ եւ իսկ:

Բայց աչերէս փախած էր քուն, Չի խնդուեցիմաք լեցուած անհուն, Հանգիստ չէի վերամսիի տակ. Քնանալ չէր իմ նպատակ:

Վերջապէս մօրս պաղատանքներ, Քնոյ անցած քանի մ'ժամեր Հագիւ կրցան ինձ քուն բերել, Եւ իմ շարժում դադարեցնել:

Տեսայ ի քուն լաւ մի երազ, Հագած էի մի նոր տարազ, Դպրոցի մէջ քան զամէն ոք Աւելի ես էի բարւոք:

Վարժապետաց յոյժ սիրելի, Աչակերտաց պատկառելի, Յառաջէի հակայաքայլ, Ստանայի տակաւ մեծ փայլ:

Աւարտեցի ընթացքս ուսման, Յաջողեցայ լինել արժան Բերելու ձեռք այն մրցանակ Որ յաղթութեան է նշանակ:

Յետ լինելոյ ուսումնաւարտ Վարէի կեանք մ'ուրախ զուարթ, Երեւելի մի գոյէնէի Բրոքէտոր եղած էի:

Կը գրէի ճառեր, գիրքեր, Յօդուածներ, զորս բիւրաւորներ Կը կարդային սքանչացած, Իմ յիշատակս էր անմոռաց:

Իբր նորնծայ մի հեղինակ Հանի ամէն տեղ մեծ հռչակ. Պաշտօնս, գրիչս, բազմաց յայտ էր Թէ զիս ըրին դրամատէր:

Բայց յանկարծ մի տխուր մրմունջ Չիս արթնցուց, անցաւ անուրջ, Տեսայ աչերն մօրն իմ լեցուն, Նա մրմնջէր իմ հօր անուն:

«Դու է՞ր կու լաս, ով իմ մայրիկ, Կու լաս որ գա՞յ մեռած հայրիկ, Որ գայ գնէ ինձ դասագիրք, Ասա, ինչո՛ւ կու լաս մայրիկ»:

Մայրիկս աչերն իւր վեր անեց Եւ արտասուքն խկոյն սրբեց, Ժպտա ի դէմս իմ այտերէս Քաղեց համարցոյ, ըսաւ այսպէս.

«Չէ, որդեակ իմ, քո դասագիրք Պիտի գնեմ ես՝ քո մայրիկ, Դու քնացիր, որդեակ սիրուն, Եւ քու քունիդ խառնէ իմ քուն»:

Ալ չքնացայ մինչ ատուտ. Տեսնել մօր մը աչքն արտասուտ Եւ քնանալ է՛ կարելի, Ինձ համար դէ՞թ անկարելի:

Անկողնոյ մէջ պառկած արթուն, Պատմեցի զիմ երազ փայլուն. Մեծ եղաւ մօրս ուրախութիւն Լսելով զայս երազ որդւոյն:

Յուսադրելով միշտ զիս նորէն, Յաջողեցաւ քանի մ'օրէն Գնել այս գիրքն իմ պատուական, Տալով կարծեմ հինգ դահեկան:

Պիտի ջանամ, զեռ օրեր կան, Ընել երազն իմ իրական. Մայրիկս ուրախ միշտ թող լինի, Պիտի ըլլամ ես անուանի:

Վան, Մայիս 30 1886 ՎԱՐՈՒՅՏԵՐԵԱՆ

Ամերիկայի Միեւրոսաց ընդերու խոզէն, Արթնատէր Զ. Գ. ԿՐԻՆ Տնօրէն-Խմբագիր Զ. Ս. ՊԱՐՆԸՄ Ֆինանսըր եօզուշու, Ամերիգան Իան:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ Ի ՏՊԱՐԱՆ Ե. ՅԱՊՈ ՊՅՈՍԱԶՆ